

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպանական նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱՐԱԿԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

633.3
Մ-33

633.3

Ա-37

Ար

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴՅՈՒՆԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ

ԳՐԱԴԱՐԱՆ № 29 (120)

Ա. ՄԱՏԹԵՎՈԱՆ

ՅԱՆՈՎՔԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՏՐԱԾ
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·1

18.9.92

25.06.2013


24 SEP 2010

ՅԱ Հ Ի ԽՈՏԱԲՈՒԹՅՈՒՆԻ ՄԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը գյուղատնտեսության տեսակետից հանդիսանում է տեխնիկական մշակությունների և անասնապահական յերկիր և նրա գյուղատնտեսական զարգացումն ընթանում է այդ ուղղությամբ, կազմակերպելով խոշոր խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ։ Սակայն անասնապահության զարգացման համար ամենից առաջ պետք է մտածել կերի մասին։

Անհատական մանր, փոշիացած, ցիր ու ցան տնտեսությունների անասնապահությունը տարվել է կիսաքաղց ձեվով, վորի պատճառով ել այն աննախանձելի արդյունքներն են վերցրել։ Ավելին չեր կարելի պահանջել դարմանով կերակրվող կիսաքաղց կովից։

Յուրաքանչյուրս մեզնից ականատես ե յեղել այն յերեվույթին, վոր անհատական տնտեսությունների անասունների կերի պաշարը չի բավարարել ամբողջ տարվա համար։ Դյուղացին ձմեռվա կեսին տասնյակ կիլոմետր ճամապահ կեր գնացել, վորպեսզի անասունների համար կեր գտնի, կամ թե չե կերակրել ե անտառի ծառերի ճղներով, նպատակ ունենալով կառավարման միայն անասունների գոյությունը։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՐԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

15495-52

նում յերբեք հնարավոր չեղարդացնել անառապահությունը՝ դարձնելով արդյունա իւտ ջուղ: Այլ կերպ ել լինել չեր կարող. անհատական տնտեսության համար անհնարին չը իր թույլ ուժերով լուծել այդ խնդիրը, անցնել խոտացանության, ձեռք քաշել դարմանից, հայթայթել այն վորակյալ կերերը, վորը պահանջում է արդյունավետ անասնապահությունը: Կերի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է անցել խոտացանության, վորը, ինչպես տեսնում եք, անհատական մանր տնտեսություններում անհնարին է: Միայն ու միայն խոչոր խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները կարող են զարգացնել անասնապահությունը՝ դարձնելով արդյունավետ ճյուղ: Միայն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները կարող են արդյունավետ անասնապահության համար պահանջվելիք կերի պաշարը հայթայթել, անցնելով խոտացանության:

Խ Զ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԽՈՏԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Խոչոր խորհրդային և կոլեկտիվ տընտեսություններում, վորտեղ աշխատանքը տարվում է պահանայորեն, վորտեղ զարգացել է անասնապահական ճյուղը, պահանջվելիք կերի բազան կարելի յե միայն ստանալ խոտացանության միջոցով: Ուրեմն խոտացանությունը ապահովում է տնտեսությունը կերով:

2. Բարձրացնում է հողի բերքատվությունը: Խոտաբույսերի մի մասի, այն է՝ առվույ-

տի, վիկի, կորնգանի արմատների վրա գտընվում են պալարիկներ, վորտեղ ապրում են բազմաթիվ բակտերիաներ: Այդ բակտերիաները ողից վերցնում են մեծ քանակությամբ ազուր իրեն սնունդ և կազմում են իրենց մարմինը ու սնում բույսը ազուտով: Բացի այդ, ունեն խոր գնացող արմատների մեծ ցանց, վորոնք վերջում նեխվելով դառնում են սքանչելի սնունդ: Հաջորդող մշակույթի համար, բարձրացնելով նրա բերքը:

3. Խոտաբույսերի արմատները չափ խոր են գնում, համեմատած մյուս բույսերի հետ, ինտեղապես սեղում են հողի ներքին շերտերից, վորից չեն ոգտվում մյուս բույսերը:

4. Խոտացանությունը հնարավորություն է տալիս պարապ, խամ չթողնել հողերը: Որինակ՝ մեր չոր յերկրագործական ջրջաններում հողամասերը վորոշ տարիներից հետո թողնը-վում են վորակես ցել՝ խոնավություն և այլ նըպաստավոր պայմաններ կուտակելու համար:

Վորապեսզի այդ տարին ցելահողամասի բերքից չզրկվենք, ցանում ենք այդ հողամասում մի վորեն խոտաբույս, որինակ՝ վիկ, վորը տալիս է մեզ խոտ և բարձրացնում է հողի բերքատվությունը, այն, ինչ վոր պահանջում ենք ցելահողամասից:

5. Խոտացանությունը հնարավորություն է տալիս ոգտագործել բարքարու և չոր հողերը:

6. Խոտացանությունը հանգստացնում է

հողը, լավացնում ե Փիղիկական հատկությունները:

Յես այս փոքրիկ գրքույկում կանդ չեմ առնի բոլոր ցանովի խոտաբույսերի վրա, այլ կիսում միայն կարեռների, այն ե առվույտի, վիկի, կորնգանի և Սուղանի խոտի մշակության մասին և կալարզեմ, թե նրանց մշակությունը վորքան մեծ դեր կարող ե խաղալ մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման յենթարկվող գյուղատնտեսության համար:

ԱՐՎՈՒՅՏ

Առվույտն արեվելյան բույս ե, Հայաստանում մշակում ե շատ վաղուց բոլոր շըրջանների ջրովի հողերում: Բազմամյա բույս ե, ունի ուժեղ և շատ խոր թափանցող արմատներ, յերբեմն հասնում են մինչև մի քանի մետրի:

Ունի հողի վերին շերտում արմատային հանգույց, վորտեղից զարդանում են նոր ցողուններ: Յուրաքանչյուր քաղից հետո հինգողունները մահանում են և արմատային հանգույցից դուրս են գալիս նոր ցողուններ:

Թփակալվող բաւյս ե, տալիս ե բարձր վորակի սենդարաք կեր: Հայաստանում մշակվաղափույտները աչքի յեն ընկնում իրենց ցրտադիմացկունությամբ: Մեզ մոտ դաշտավայրերում հնձվում ե 3—4 անգամ, նախալեռնային շըրջաններում 2—3 անգամ, իսկ լեռնային շրջաններում 1—2 անգամ:

ԱՐՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առվույտը հողի նկատմամբ պահանջկուտք, գնում ե և լավ բերք ե տալիս տմհն տեսա-



74. 1. ԱՐՎՈՒՅՏ

Հի հողերում, սակայն չի սիրում շատ խոնամ՝
(զինա) և քարքարու հողերը:

ՍԵՐՄԻ ՔԱՆԱԿԸ

Սովորաբար 14եկտարին՝ ցանվում է 15—
25 կիլոդրամ: Սակայն սերմի քանակը կախու-
ված է մի շարք պայմաններից, որինակ՝ սերմի
մշակությունից: Սերմը պետք է ունենա վոչ
պակաս 85 տոկոս ծլունակություն, այսինքն՝
վերցրած 100 սերմից 85 սերմն ընդունակ պի-
տի լինի ծլելու: Սերմը պետք է ուղարկել սերմ
ստուգող կայաններն անալիզի յենթարկելու
համար: Յեթե ծլունակության տոկոսը շատ է
փոքր, չպետք է ցանել, իսկ հակառակ՝ դեպ-
քում շատ սերմ պիտի վերցնել, համաձայն
ծլունակության տոկոսի:

ԱՐԴՈՒՅՏԸ ՑԱՆԵԼ ՇԱՐՔԱՑԱՆՈՎ

Մեզ մոտ մինչև հիմա առվույտը ցանվում
է շաղացանով: Փորձերը ցույց են տվել, վոր
շարքացանով ցանելիս առվույտի բերքը բարձ-
րանում է: Անհրաժեշտ է առվույտի ցանքը
կատարել անպայման շարքացանով: Եարքա-
ցանով ցանելիս պետք է մեքենան այնքան յե-
րես դցել, վորպեսզի առվույտի սերմերը խորը
չընկնեն, վորովհետև խորը ցանված առվույտի
սերմը իր փոքրիկ ու քնքուշ լինելու պատ-
ճառով լավ չի ծլում:

ՑԱՆԵԼՈՒ ԺՄՄԱՆԱԿԸ

Առվույտի սերմերը ծլելու համար պա-
հանջում են խոնավություն և ջերմություն,
հետեւվապես շատ վաղ չպետք է ցանել և վոչ
ել շատ ուշ: Անհրաժեշտ է, վորպեսզի հողում
լինի և խոնավություն, և տաքություն: Ավա-
գային հողերը շուտ են տաքանում և շուտ ել
կորցնում են խոնավությունը. նման հողերում
շուտ պիտի ցանել: Ծանր կավային հողերը
խոնավություն ուշ են կորցնում և ուշ ել տա-
քանում են. այս հողերում հարկավոր է ուշ
ցանել: Դաշտավայրերում և նախալեռնային
վորոշ շրջաններում ցանքը կատարվում է
ապրիլին, իսկ լեռնային շրջաններում ավելի
ուշ:

ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Առաջին ատրին սովորաբար առվույտը
ըեւ բերք է տալիս. վորպեսզի այդ տարվա հո-
դի բերքից չըրկվենք, առվույտը ցանում ենք
մի վորեկ մշակույթի մեջ: Ցանքը կատար-
վում է գարնանը, սովորաբար աշնանացան
ցորենի կամ գարու մեջ, վորովհետև աշնա-
նացանները գարնանացանի հետ համեմատած
15 որ առնվազը շուտ են հնձում, հետեւվապես
առվույտը շուտ է ազդավում ծածկոցից: Մեզ
մոտ տաք շրջաններում յերբեմն առվույտը
ցանքում է աշնանից, այդ դեպքում իհարկե
առանց ծածկոցի:

ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՎՄ ՊԻՏԻ ՑԱՆԵԼ

Առվույտի սերմը շատ մանր է, իսկ ծիլերը նուրբ, ուստի չի կարելի շատ խորը ցանել. շատ տեղերում՝ գյուղացիները՝ նույնիսկ փողիսով չեն ծածկում, այլ ուղղակի չլսի իով» են ծածկում, «չափարում» են։ Շարքացանով ցանելիս անհրաժեշտ է մեքենան յերես գցել, վորպեսզի սերմը շատ խորը չընկնի։ Սովորաբար ցանվում է 1—2 սանտիմետր խորությունը։

Խ Ն Ա Մ Ք Ը

I. Զրելը. Մեղ մոտ առվույտը մշակվում է միմիայն ջրովի պայմաններում։ Զուրը հանդիսանում է, ինչպես գյուղացիներն են առում, «առվույտի հոգին»։ Վորքան ժամանակին և շատ ջուր հասցրիր, այնքան առատ րերք կվերցնես։ Բայց շատ բերք ստանալու համար միայն ժամանակին ջրելլ չե, այլ անհրաժեշտ է ժամանակին փոցիսել, պարարտացնել, պայքարել վնասատուների գեմ և այլն։ Սակայն այդ բոլորը կատարել, այն ել ժամանակին՝ յերեք հնարավոր չե անհատական ցիր ու ցան տնտեսություններում։ Բոլոր տեսակի խնամքը ժամանակին կատարելու համար անհրաժեշտ է ունենալ միջոցներ և պլանային աշխատանք, վորով ապահովված են միայն խոշոր խորհրդացին և կոլեկտիվ տնտեսությունները։ Հետեվապես ժամանակին փոցիսելը, ժամանակին պարարտացնելը և ժամանա-

կին վնասատուների գեմ պայքարել միայն հնարավոր և խորհրդացին և կոլեկտիվ տնտեսություններում։ Յեթե այդ բոլոր տեսակի խնամքը միայն հնարավոր և կատարել խորհրդացին և կոլեկտիվ անտեսություններում, ապա որենու մեծ բերքն ել հնարավոր և միայն խորի. և կոլ. անտեսություններում առանձիւ։ Տեսնեմ, ինչ ոգուր և տալիս փոցիսելը։

Մեղ մոտ փոցիսելու մասին չեն մտածում, մինչդեռ փոցիսելը ավելացնում և առվույտի բերքը 15—20 տոկոսով։ Խնդիրը հետեւյալումն է. առվույտի ցանքսի 2-րդ, 3-րդ և այլ տարիներին հողը նստելով կարծրանում է, իսկ նման հողում բույսը վատ և զգում իրան։ Այդ պատճառով ել 2-րդ տարին վաղ գարնանը անհրաժեշտ է առվույտի ցանքսը փոցիսել մանր «դիր-զագ» կամ սկավառակավոր փոցիսով մեկ անգամ։ 3-րդ տարին մի քանի անգամ ենք փոցիսում, մեկ վաղ գարնանը և ապա յուրաքանչյուր հնձից հետո ջրում ենք, քեզը գալուց հետո փոցիսում։ Փոցիսելը վոչ միայն չի վնասում, այլ և պատճառ ելինում առվույտի ուժեղ անելուն, վորովհետեւ վերավորված տեղերից ուժեղ կերպով նոր ցողուններ են առանում։

Այժմ պարարտացման մասին։ Առաջին տարին առվույտի ցանքսը պարարտացման կարիք չի զգում, իսկ հետազա տարիներում անհրաժեշտ է պարարտացնել, վորովհետեւ բույր այդ ժամանակամիջոցում։ մեծ քանակու-

թյանը բ հանքային նյութեր և վերցնում հողից :
Պարարտացվում ե գոմաղբով, մոխրով, հան-
քային պարարտանյութերով և այլն : Գոմաղբի
դեպքում անհրաժեշտ ե գոմաղբը լավ պատ-
րաստված լինի, այրված . հակառակ դեպքում
մենք անդիտակցարար մոլախոտի սերմեր
կմտցնենք ցանքսի մեջ : Գոմաղբը չի կարելի
աշնանից թումբ-թումբ պահել առվույտի
ցանքսում, վորովհետեւ ձյան և անձրեային ջրե-
րից գոմաղբի սննդարար մասերը լուծվում,
հեռանում են : Գոմաղբը ոլիտի պահել վորեւ-
ծածկոցի տակ և շաղ տալ վաղ գարնանը :

Մեր մի շարք ըրջաններում հսկայական
քանակությամբ մոխիր և հավաքվում, վորն
անհրաժեշտ ե ոգտագործել վորակիս պարար-
տանյութ : Մոխրով պարարտացված առվույ-
տի ցանքը բարձրացնում ե բերքը 50 տոկո-
սով : Մոխիրը չի կարելի աշնանից շաղ տալ
կամ դաշտ տանել, հարկավոր ե ձմեռը կու-
տակել մի վորեւ չոր տեղ ծածկոցի տակ, վո-
րովհետև անձրեներից և ձյան ջրերից լուծվում
են մոխրի սննդարար մասերը և հեռանում : Մո-
խիրը դաշտ են տանում գարնանը և շաղ տա-
լիս առվույտի ցանքսի վրա :

Հանքային պարարտանյութերից մեծ ո-
գուտ ե տալիս սուպերֆուֆատը, վորը այժմ
ամեն տեղ տարածված է : Վերցվում ե մեկ հեկ-
տարին 2—3 ցենաներ սուպերֆուֆատ և գար-
նանը շաղ տրվում առվույտի ցանքսի վրա :

Թուրքեստանում պարարտացման մի շարք
փորձեր տվել են հետեւյալ արդյունքները :

Զպարարտացված	Պարարտացված	Պարարտ.
սուպերֆուֆատ.	սուպեր	
Բերքի քանակը 1 հեկտ. 197,5 գ.	675 գ.	750 գ.
(3 քաղը միասին)		

ԱՐՎՈՒՅՏԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Մեզ մոտ առվույտի ամենատարածված և
ամենավայրէն պահոր վնասատուները հանդի-
սանում են թրթուռը և «դայլուկը», «դաղձը»
(կամ կուսկուտա) :

Թրթուռից շատ ե տուժում առվույտի ա-
ռաջին քաղը . յեթե հաշվելու լինենք, ամբողջ
Հայաստանում բերքի 30 տոկոսը թրթուռի
դեպքում տուժում ե, իսկ դա հսկայական
բերք ե :

Այդ թրթուռները զարգանում են միջատ-
ների դեռ նախորդ տարվանից գրված ձվերից,
վորոնք ձմեռը անց են կացնում առանց ցըր-
տահարվելու : Գարնանը այդ ձվերից դուրս են
գալիս վերոհիշյալ թրթուռները և սկսում են
արագ կերպով սնվել առվույտի տերեվների
կանաչ մասսայով, թողնելով տերթվի զղերը :
Հեռվից առվույտի թրթուռով վարակված
ցանքը նկատելի յե, կորցնում ե իր կանաչ
գույնը, գորշանում ե :

Այդ թրթուռների դեմ պայքարելու հա-
մար կան մի շարք միջոցներ. նախ՝ վարակվելու
դեպքում անհրաժեշտ ե հնձել ու այրել կամ

առանց քաղելու թողնել անասուններին արածելու. քաղելուց կամ արածացնելուց հետո անմիջապես ջրում ենք ցանքսը:

Թրթուռների դեմ կարելի յե պայքարել նաև կրաջրի միջոցով, թրթուռ նկատելուն պես պատրաստում ենք կրաջուր և մի քանի անգամ սրսկում:

Պակաս վնաս չի տալիս «գայլուկը» կամ «դաղձը»: Այս դեպքում անհրաժեշտ է նախ ցանելիս սերմի մեջ գայլուկի սերմ չլինի, վորի համար ել սերմը պետք է անպայման ըստուգել սերմ ստուգող կայաններում: Առվույտի սերմի մեջ գայլուկի սերմ լինելու դեպքում արգելվում է նման սերմը ցանել: Վո՞րն ու «գայլուկը» կամ «դաղձը». դա մի պարագիտ բույս է, այսինքն՝ ապրում և առվույտի հաշվին: Չունի իր սեփական արմատները, բայց ունի ծծիչներ, վորոնցով կարթում և առվույտի ցողուններից ու ծծում նրանցից սնունդ: Սպիտակ թելիկներ են, վորոնք շատ կարմ ժամանակամիջոցում տարածվում են ամբողջ ցանքսում: Քիչ լինելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես վարակված թփերը հավաքել ու այրել, իսկ յեթե ամբողջ ցանքսն ե վարակված, հարկավոր ե նախքան գայլուկի ծաղկելը հնձել առվույտը: Իսկ ամենակարևորն ե, նորից եմ կրկնում, վոր սերմը ստուգված լինի սերմ ստուգող կայանների կողմից:

ԱՌՎՈՒՅՏԻ ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Շատ կարեւոր ե առվույտը հնձել ժամանակին: Ժամանակին հնձելը ազդում ե և խոտի վորակի վրա և հաջորդ քաղի քանակի վրա: Սովորաբար առվույտի հնձի ճիշտ ժամանակը հաշվում ե այն մոմենտը, յերբ հատ ու կենտ ժաղիկներ են յերեվում: Այդ ժամանակվա քաղից ստացած խոտի վորակը շատ բարձր է: Չորացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տերեվների վրա, վորպեսզի տերեվներն ու ծաղիկները չթափվեն: Ամենասննդարար մասը դտնվում է հենց այդ տերեվներում:

Առվույտի սերմ ստանալը: Սերմի խնդիրը շատ կարեվոր է: Լավ բարձր բերք և տալիս այն սերմը, վորը ստացված և տեղից, վորովհետեւ նախ՝ մաքուր ե լինում և յերկրորդ՝ հարմարված և լինում մեր կլիմայական և հողային հատուկ պայմաններին: Սերմ ստանալու համար նպատակահարմար ե վերցնել առվույտի ցանքսի չորրորդ տարին I-ին և II-րդ քաղը: Սերմի համար ընտրում են ամենալավ ցանքը, վորը միանդամայն մաքուր ե մոլախոտերից և գայլուկից և վորը լավ միահավասար բարձր բերք և տալիս: Սերմի համար հնձվում ե այն ժամանակ, յերբ սերմի պատիճները կամ ունդերը սկսում են գորշանալ. կիսահաս սերմերը հասունանում են խուրձերում: Ուշացնել չի կարելի, վորովհետեւ սերմերը կթափվեն: Սերմի

Համար առվույտը հնձելուց հետո խուրձեր են կապում և վորոշ ժամանակ չորացնելուց հետո կալսում։ Մեկ հեկտարից ստացվում է 1,5—3 տենտոներ սերմ։

Վ Ի Կ

Վիկը թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող խոտարույս ե, վորը մշակվում է թե խոտ ստանալու և թե սերմ ստանալու համար։ Գործ է ածվում և վորպես չոր, և վորպես կանաչ կեր։

Վիկի կարեվոր հատկությունը այն է, վոր նա տալիս ե ամենալավ վորակի, նուրբ և սերենդարար կեր։ Սրանց մեջ սպիտակուցային մասը ավելի շատ ե, քան մյուս խոտաբույսերի մեջ։

Վիկը հողերի վերաբերմամբ առհասարակ պահանջիուտ չե և շատ քիչ հողեր կան, վորտեղ վիկը դժվարությամբ ե գնում (այսպես որինակ՝ շատ խոնավ կամ շատ ծանր կավահողերը)։

Վիկը հացաբույսերի համեմատությամբ յափ զարգացող արմատներ ունի, վորոնիք ավելի լավ են ոգտագործում հողի մեջ յեղած հանքային նյութերը։ Վիկի արմատների վրա գտնվում են մեծ քանակությամբ պալարիկներ, վորտեղ ապրում են բազմաթիվ բակտերիաներ, վորոնք հողը ազոտով պարարտացնելու գործում մեծ դեր են կատարում։ Մեզ մոտ Հայաստանում վիկի մշակությունը նոր է։ Անկախ այս հանդամանքից, մեր բոլոր շրջան-

ներում ցորենի ցանքսերի մեջ հանդիպում ենք վիկի բազմազան տեսակների, վորոնց դյուրացիք «գյուլուլ» անունն են տալիս։

Վիկն ունի բազմաթիվ տեսակներ, գարնասացան և աշնանացան, սովորական վիկ և թափոտ վիկ։



Նկ. 2. Սովորական ՎԻԿ

1—սերմ, 2—արմատ

Թափոտ վիկը սովորական վիկից տարբեր գում է նրանով, վոր նրա յերկար կոթի վրա գտնվում է վողկույզաձև ծաղկափթությունը, բացի այդ ամբողջ բույսն ավելի մազուր է։

Թափուտ վիկը սովորականի հետ համեմատած ավելի յե ընտելացած հողային և կիմա-



ԱԿ. 3. ԹԱՎՈՏ ՎԻԿ.

յական չոր պայմաններին, մինչև իսկ բուսնում
ե ավագային հողերում :

ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Վեհական առաւտ և լավ վորակի բերք ե տալիս, ապահովելով տնտեսությունը մեծ քանակությամբ կերպվ:
 - Մեր չոր յերկրագործական զրջաններում, վորտեղ տնտեսությունները ստիպված

Են Հողերի վորոշ մասը յութքանչուր տարի
թողնել վորպես ցելահող—խոնավության և
այլ նպաստավոր պայմաններ կուտակելու հա-
մար, նման ցելահողերից այդ տարին բերք չի
վերցվում։ Վիկը հնարավորություն և տալիս
ոգտագործել նման ցելահսղերը։

3. Թալուս վիկի աշխանացան տեսակը
մեզ մոտ աշխանը ցանելու դեպքում—գարնանը
ապրիլին կամ մայիսին հնձելու համար արդեմ
պատրաստ ե լինում: Հենց այդ ժամանակն է,
վոր տնտեսության խոտի պաշարը վերջանում
է, իսկ վիկը ողնության է գալիս:

4. Վիկը ցանելուց մինչև հնձելի տևամ
և 2-2½ ամիս այս հանգամանքը թույլ է
տալիս մեզ ցորենը հնձելուց հետո տեղը վիկ
ցանել և մինչեվ աշխան ցրտերը սկսելը հնձել
ի հարկե խոսքը վերաբերում է նախալեռնային
շրջաններին։ Կարելի յե այլ կերպ վարվել։
Աշխանը վիկը ցանել, վաղ գարնանը հնձել և
տեղը ցանել ընդհանրապես ուշ ցանվող մշա-
կույթներ (որինակ, ծխախոտ, կաղամթ, ճա-
կընդեղ և այլն)։ Այդ բոլորը հնարավոր են նա
խալեռնային և չոր լեռնային շրջանների ջրովի
հողերում (որինակ, կոտայք, Լենինական և
այլն)։

Այսպիսով, շնորհիկ վիճիկ մշակուք-յան,
մի ամառվա թիբանց նաև գործիկ ենույն հողամա-
սից կարելի է բարելի պատճենական

20162—ССРА
И.М. А. Масникова
И. ИЗЦЕЛЬЧИЛИ УЧАСЬ

ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորովհետև վիկի ցողունները կանգուն էն, ուստի վիկը ցանում են սովորաբար վորեն հացաբույսի հետ։ Աշնանացանի դեպքում աշորայի հետ, դարնանացանի դեսլքում վարսակի կամ գարու հետ։

Սուանց հացաբույսի վիկը պառկում է խըճը ձըճվում, լավ չի զարգանում, լավ սերմ չի տալիս, ցածի տերեփները սկսում են փտել, դժվար է հնձվում։

ՀՈՌԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Աշնանացան թավոտ վիկ ցանելու համար հողը հերկվում է հացահատիկները հնձելու ցհետո, ոգոսառսին կամ սեպտեմբերին։ Դարնանացան վիկի դեպքում, վարի ժամանակը կախված է արդեն մի շարք պայմաններից։ Չոր կլիմայական պայմաններում հողամասը պետք է հերկվի աշնանից, վորպեսզի շատ խոնավություն կուտակի իր մեջ, իսկ խոնավ կլիմայական և հողային պայմաններում կարելի յի հերկել գարնանը։

ՎՈՐՔԱՆ ՄԵՐՄ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ

Դա կախված է նրանից, թե ինչ նպատակի համար ենք ցանում՝ յեթե սերմ ստանալու համար ենոսր պիտի ցանել, դրա համար պետք է սերմ քիչ վերցնել, իսկ յեթե խոտ ստանալու համար է՝ խիտ է ցանվում—սերմ շտու է վերց-

վում։ Բացի այդ սերմի քանակը կախված է միշտը պայմաններից, ինչպիսին ե հողային, կլիմայական, սերմի ծրունակությունից և այլն։

Մեկ հեկտարի համար սովորաբար վերցվում է 160—192 կիլո սերմ, վորի մոտ $\frac{1}{3}$ մասը (48—64 կիլո) հացահատիկ՝ աշորա, վարսակ կամ գարի, իսկ $\frac{2}{3}$ մասը (112—128 կիլո) վիկ։ Մերմ ստանալու համար պիտի ցանել այսպես, վերցվում է կեսը հացահատիկ, իսկ մյուս կեսը վիկ։

ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Վիկը ցրտից չի վախենում, այդ պատճառով ել կարելի յե ցանել շատ վաղ։ Ռուսաստանի փորձերը ցույց են տվել, վոր թավոտ վիկը ձմռան ցրտերից բոլորովին չի տուժում։ Աշնանացանի դեպքում ցանվում է ոգոսառսին կամ սեպտեմբերին։ Իսկ դարնանացանի դեսլքում վաղ դարնանը։

ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Պետք է նշել մի հանգամանք, վոր վիկը հերկերի նկատմամբ այնքան ել պահանջելու չե, վորի պատճառով ել, յեթե հողը աշնանը կամ ցանքսից առաջ հերկված է լինում, ապա ցանելու ժամանակ կրկնահերկ չի արվում, այլ բավարարվում է միայն փոշխելով։

Վիկը շարքացանով է ցանվում։ Առաջ ցանում են վիկը. նախապես մեջ առ մեջ փակելով

շարքացանի անցքերը — այնպես վոր 11 շարքանի մեքենան դառնում ե 6 շարքանի՝ 2-3 շաբաթից հետո, յերբ վիկը արդեն լավ կանաչած է լինում, նույն ձեվով արդեն ցանում են հացահատիկը. միայն թե մեքենան այնպես են սարքում, վոր հացահատիկի սերմեզն ընկնեն չցանված տեղերը:

Յեթե հողամասի դիրքը թույլ չի տալիս ցանքու կատարել շարքացանով, այդ գեղքում հողից չպեկվելու համար ցանքու կատարում ենք շարքացան: Այս գեղքում սերմերը դարձյալ չեն խառնում, այլ նախ մեկ ուղղությամբ վիկի սերմերն են շաղ տալիս, հետո խաչաձև ուղղությամբ հացահատիկի սերմերը ու նոր փոցխում, այս գեղքում ավելի հավասար ցանքու և ստացվում:

Այսուհետեւ վիկն առանձին խնամք չի պահանջում: Մեր յերկրի տաք կլիմայական պայմաններում, նախալեռնային շրջաններում վիկի ցանքսերը մասամբ ջրելու կարիք են զգում, իսկ լեռնային շրջաններում, նամանավանդ յեթե աշնանացան թափուտ վիկ ենք ցանել, ջրելու կարիք չեն զգում: Վիկը հնձվում է, յերբ բույսերն սկսում են ծաղկել. ուշացնելու գեղքում ստացվում է կոպիտ կեր:

Յեթե վիկը ցանում են սերմ ստանալու համար, այդ գեղքում հնձում են, յերբ բույսերի մոտ 50 տոկոսը սերմակալած են լինում. չի կարելի սպասել, վոր բույսերի վրա յեղած բոլոր ունդերը հասնեն, վորովհետեւ վիկը

միաժամանակ չի ծաղկում, հետեւվապես միաժամանակ ել չի սերմակալում: Ներքեւի պատիճների սերմերը ավելի շուտ են հասունանում, ուշացնելու դեպքում հասունացած պատիճները հետությամբ բացվում են և սերմերը թափվում են գետին:

Սերմի համար վիկը հնձելուց հետո խուրձեր են կապում և վորոշ ժամանակ չորացնելուց հետո սովորական ձեվով կալսում են ինչպես ցորենը:

Հետո, վիկի մաքուր սերմեր ստանալու համար, ստացված սերմերի խառնուրդը անց են կացնում սովորական գտիչ մեքենայով, վորը հացարույսերի սերմերը բաժանում ե վիկից:


ԿՈՐՆԳԱՆ

Կորնգանը թիթեռնածաղիկներին պատկանող բազմամյա բույս, արմատների վրա պալարիկների մեջ ապրող բակտերիաները ողի ազոտը վերցնում են իրեն սնունդ և սնում նաև բույսերին:

Կորնգանը յերաշտին դիմացող բույս է: Յերաշտ տարիներին տալիս ե ավելի շատ բերք, քան առվույտն ու յերեքնուկը: Կորնգանը գեղի հողերը շատ քիչ պահանջկուտ ե, զընում և ամենաքարքարու հողերում, ուր հազարդյուն կուլտուրաներ են գնում:

Ունի ուժեղ զարգացած արմատներ, սովորաբար 1—2 մետր խորությամբ: Կորնգանի

արմատները ընդունակ են հողամ յեղած բույսերի համար սովորաբար անողտագործելի անդանյութերը լուծելի դարձնել։ Կորնգանի արմատները շատ խոր են գնում, վորի շնոր-



Նկ. 4. Կորնգան։

չիվ ոգտվում են հողի խորին շերտերից, վորտեղից ուրիշ մշակույթներ չեն ոգտվում։ Կրասեր բույս ե։ Այն հողերը, վորոնք աղքատ են կրից, կորնգանի համար նպաստավոր չեն։

Կորնգանը կանաչ դրությամբ անասուններին փորուռուցք չի պատճառում, ինչպես առվույտն ու յերեքնուկը. Ժամանակին հագաբիւծ կորնգանը հանդիսանում է անասունների համար լավ սննդաբար կեր։

Պարունակում է մեծ քանակությամբ սպիտակուցներ և կիր։ Կիրն անհրաժեշտ է յերիտասարդ աճող անասունների վոսկրները ամբացնելու համար։ Ուրիշ յերկրներում այդ պատճառով յերիտասարդ աճող անասուններին կերակրում են միմիայն կորնգանով։

Կորնգանը մեղրատու բույս է, ծաղկման սկզբից մինչև հնձելը տեփում է 8—10 որ, այդ ժամանակամիջոցում մեղմնենքը մեծ քանակությամբ մելքանյութ են ժաղովում կորնգանի ծաղիկներից։ Ահա ինչու համար մեր նախալեռնային և լեռնային շրջաններում, ուր զարդացել ե անամսապահնությունն ու մեղվաբուծությունը, անհրաժեշտ է կորնգան ցանել։

Հայաստանում վաղուց ե, վոր մշակում են կորնգանը, բայց միայն մի քանի շրջաններում, ինչպիսին են՝ Լենինական, Զանգեզուր, Դարձլագյաղ, Ախուա և այլն։ Ճիշտ է, առաջին տարին մեծ բերք չի տալիս, սակայն 2-րդ 3-րդ և այլ տարիներին սովորաբար հնձվում է 2 անգամ։

ԿՈՐՆԳԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կորնգանը ցանելու համար հողի նկատմամբ առանձին պահանջ չունի, անհրաժեշտ է միայն հողը քիչ թե շատ փխրուն լինի: Ցանվում ե շարքացանով, իսկ ուր հնարավոր չե, կարելի յե և շաղացանով, սակայն շարքացանի դեպքում բերքը 10—20 տոկոսով բարձր ե րոտացվում:

Շարքացանի դեպքում ցանվում ե և հեկտարին 125—145 կիլո սերմ, շաղացանի դեպքում 160—200 կիլո:

Կորնգանը սառնամանիքներից չի վախենում, կարելի յե ցանել վաղ գարնանը. վորքան շուտ ե ցանվում, այնքան լավ ե կանաչում: Կորնգանի սերմերը ծլելու համար պահանջում են շատ խոնավություն, վորի պատճառով ցանկալի յե ցանելուց առաջ 1—2 որ սերմը թրջել ջրում, վորպեսզի խոնավություն կլանի, ապա նոր կարելի յե ցանել:

Սերմը արտաքինով շատ նման ե առվույտի սերմին, մի քիչ նրանից մեծ. ծլերը նուրբ են, չի կարելի խորը ցանել: Սովորաբար ցանում են 1—2 սանտիմետր խորությամբ:

Կորնգանի ցանքսն առանձին խնամք չի պահանջում, սակայն անհրաժեշտ ե յուրաքանչյուր գարնանը և հնձից հետո փողինել «զիգզագ» փողինով:

Լավ վորակի և նուրբ կեր ստանալու համար անհրաժեշտ ե հնձել ծաղկման սկզբից.

ուշացնելու գեղքում սաացվում և կոպիտ կեր:

Չորացնելիս ուշադրություն պիտի դարձնել, վորպեսզի տերևները քիչ թափվեն. տերևների մեջ են գտնվում գլխավոր սննդանյութերը: Սերմ ստանալու համար թողնում են կորնգանի առաջին քաղը: Անհրաժեշտ ե ճիշտ ժամանակին հնձել, վորովհետեւ շատ հասունացած սերմերը հնձի ժամանակ թափվում են, այդ ըրջանում վտանգավոր են նաև քամիները, վորից շատ սերմ ե փշանում: Այդ պատճառով ել սերմի համար թողած կորնգանի հունձը կատարվում ե վաղ առավոտյան, վոչ ամբողջովին հասունացած մոմենտին:

Հնձած կորնգանը անմիջապես փոխադրվում ե կալսելու վայրը և սովորական ձեռվով կալսվում: Մեկ հեկտարից ստացվում ե 900—1000 կիլոգրամ մաքուր սերմ:

ՍՈՒՂԱՆԻ ԽՈՏ

Սուղանի խոտը «Սուղանի» յե կոչվում նրա համար, վոր առաջին անգամ գտել են Աֆրիկայում ատք, չոր Սուղանի անազատում: 1909 թվին առաջին անգամ մշակվել ե Ամերիկայում, 1914 թվին Ռուսաստանում, իսկ մեղ մոտ Հայաստանում մշակության մեջ հայտնի չե, յեթե հաշվի չառնենք վորձադաշտերի և «Զագ» տնտեսության կատարած ցանքսերը, վորոնք տգել են լավ արդյունք:

1. Սուդանի խոտը բարորովին պահանջկուտ
չե հողի նկատմամբ, անում և լավ քերք է տա-
լիս տմեն տեսակի հողերում, չի սիրում միայն
շափից դուրս ավագուտ և ճահճային հողերը:



Նկ. 5. ՍՈՒԴԱՆԻ ԽՈՏ.

2. Սուդանի խոտը դիմանում է մեծ յե-
րաշտներին, տալիս և լավ քերք նույնիսկ շատ
չոր տարիներին:

3. Խիստ թփակալվող և տերեւտիկալվող
բույս է, բարձրանում է մինչև 1,5—2 մետր.
Պատահում են դեպքեր, յերբ 1 բույսը տալիս է

առ յնիսկ մինչև 109 գ. զուններ, նաև անավանդ
յերբ նոսր ե ցանված: Միաժյա բույս է:

4. Մեկ ամսվա ընթացքում ճիշտ ձեվով
մշակելու դեպքում տալիս է 2 և նույնիսկ 3
անգամ հունձ:

Որինակ՝ Թուսաստանի Դնեպրոպետրով-
սկի փորձնական կայանում մեկ հեկտարից հե-
տեւյալ բերքն է ստացվել:

Ստացվ.	I քաղ.	II քաղ.	III քաղ.	Ընդամ.
չոր խոտ				
1915 թ.	135 ֆ.	336 ֆ.	—	471 ֆ.
1916 թ.	135 ֆ.	152 ֆ.	66 ֆ.	353 ֆ.
1917 թ.	135 ֆ.	171 ֆ.	—	363 ֆ.

ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողը պատրաստվում է աշնանից, վար-
դում է 15 սանտիմետր խորությամբ, վորպես-
ղի վարված հողում կուտակվեն աշնանային և
ձմեռային մթնոլորտային տեղումները (ան-
ձրեն, ձյուն): Գարնանը, վորպեսղի հողը չչո-
րանա, փոցխում են ու թողնում մինչև ցանելը:

ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Սուդանի խոտը ծլելու համար պահան-
ջում է շատ ջերմություն, վորի պատճառով
ել ցանվում ե ուշ, յերբ գրեթե դաշտային
աշխատանքները վերջացած են լինում, սովորա-
բար գարնանացան ցորենները ցանելուց հետո:

Մանր կավային հողերը դժվար են տաքա-
նում, բայց ուշ են կորցնում խոնավությունը,

նման հողերում կարելի յե ուշ ցանել։ Ավագոտ հողերը շուտ են կորցնում խոնավությունը և շուտ ել տաքանում են, այսպիսի հողերում՝ կարելի յե շուտ ցանել։

Վորքան սերմ ե հարկավոր 1 հեկտարին։ Սերմի քանակը կախված ե թե ինչ նպատակով ե ցանվում։ խոտ ստանալու թե սերմ։ Խոտ ստանալու համար 1 հեկտարին ցանվում ե վոչ ավել 20-23 կիլոյից։ Սերմ ստանալու համար ցանվում ե նոսր և վերցվում ե 12-16 կիլո սերմ։ Սերմի քանակը կախված ե նաև սերմի ծլունակությունից։ Սերմը պետք ե ստուգել անպայման սերմ ստուգող կայաններում։

ՑԱՆՔՄԻ ԶԵՎԸ

Ցանքսը կատարվում ե շարքացանով։ Վերը ասացինք, վոր Սուդանի խոտը խիստ թբիակալվող ե, վորի պատճառով ել պետք ե շարքերը իրարից հեռու լինեն, վոչ պակաս 25 սանտիմ.։ Սերմ ստանալու համար շարքերի միջի տարածությունը նույնիսկ մինչև 60 սանտիմետր ե վերցվում։ Խիտ լինելու դեպքում տերևներ քիչ ե տալիս և խոտի վորակը վատանում ե։

Անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել ցանքսի խորության վրա։ Սուդանի խոտի սերմերը մանր են, ծլերը նուրբ, շատ խորը ցանել չի թույլատրվում։ յեթե վերին շերտերում խոնավություն կա, ցանվում ե 4 սմ. վրա, իսկ

յեթե վերին շերտը չորացել ե, ցանվում ե և սանտիմետրի վրա։

Սուդանի խոտը առանձին խնամք չի պահանջում, սակայն պետք ե նշել մի հանդամանք. դա սկզբնական շրջանում թույլ աճելն է։ յեթե հողը վարակված ե մոլախոտերով, անցրած եշտ ե կատարել քաղհան։

ՍՈՒԴԱՆԻ ԽՈՏԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Կարելի յե ոգտագործել հետեւյալ նպատակների համար՝ վորպես չոր խոտ, վորպես կանաչ կեր, սիլոսի համար և վերջապես անտուններ արածացնելու համար։

Վորպես չոր խոտ, Սուդանի խոտը տալիս է լավ վորակի չոր խոտ, սակայն վորակը կախված ե նրանից, թե վորքան ճիշտ ենք ընտրել հնձի ժամանակը։ Ճիշտ ժամանակը հնձի դա այն մոմենտն ե, յերբ սկսում են տալ հորաններ. ուշադրություն չպետք ե դարձնել անվերջ թփակալման վրա, վորովհետև ամենաառաջին ցողունները ժամանակին չհնձելու գեպքում կոշտանում են։

Առաջին հնձի ժամանակի ճիշտ ընտրությունից ե կախված Ա քաղի քանակը։ Սուդանի խոտը պարունակում ե ավելի շատ ջուր, քան մարդագետնային մյուս խոտաբույսերը, այդ իսկ պատճառով հարկավոր ե լավ չորացնել։

Կանաչ կերի համար. կանաչ կերի համար քաղվում ե ըստ պահանջի, բայց պետք ե աշխատել շատ շուտ չքաղել։ Հենց վոր բույսը

բարձրանում և 55-70 սմ., ազատ կարելի յե ոգտագործել: Կանաչ կերի համար կարելի յե քաղել ամբողջ ամառ և աշունը: Վորպեսզի հավասարաբար ոգտագործվի, անհրաժեշտ է դաշտի բաժանել հավասար մասերի: այդ դեպքում մինչեւ վոր հերթը համար և վերջին մասին, առաջին մասը, վորը վաղուց եր քաղված, նորից պատրաստ և լինում կանաչ կերի համար: Այսպիսով տնտեսությունը ապահովված է լինում ամբողջ ժամանակ կանաչ կերով:

Սիլոսի համար. Նպատակահարմար և վերջին քաղը ոգտագործել: Աշնանը Սուղանի խոտը աճում է մինչեւ առաջին սառնամանիքները, հետեւ վապես հնարավորություն չի լինում. վերջին քաղից ստացած խոտը չորացնել, դրա շնորհիվ ել վերջին քաղը թողնվում է մինչեւ ցրտերը և ոգտագործվում սիլոսի համար:


Անառանների արածացմելու համար. Աւրիշ յերկրներում նման փորձեր՝ գրվել են և ստացվել են լավ արդյունքներ: Յերբ Սուղանի խոտը լավ հասունացած վըստթյան մեջ և արածելու համար, մոտավորաբեն հունիսի կեսերին, անառանները բաց են թողնվում այդ ցանքսը արած. Համար 15 որ: Հետո արվում է 3 շաբաթ գաղար, Սուղանի խոտը նորից և աճում, դադարից հետո կրկին բաց են թողնում անառաններին դարձյալ 15 որով: Նորից գաղար և արվում մեկ ամիս կամ ավելի, այդ ժամանակամիջոցում Սուղանի խոտը նորից հասնում է, անառաններն արածում են ևս 1 շա-

րաթ: Այսպիսով Սուղանի խոտը հնարավորություն և տալիս միենույն հողամասում մեկ ամառվա ընթացքում անառաններին արածացնելու դիրք է շաբաթ:

Մերմ ստանալու համար հնձվում է, յերբ հուրանների մեծ մասը հասունացած է լինում. չի կարելի սպասել մինչեւ մյուս հուրանների հասունանալը: Հնձելուց հետո թողնում են խուրձերով չորանա. այդ ժամանակամիջոցում կիսահատուն սերմերը հասունանում են, հետո փոխադրում են կալսելու վայրը և սովորական ձեվով կալսում:

Մեկ հեկտարից ստացվում է 7-10 ցենտներ սերմ:

Ահա այն բոլորը, ինչ վոր կարող է մեզ տալ Սուղանի խոտը նամանավանդ մեր դեմի շոր շրջաններում, ի նկատի ու նենալով նրա հիմնական հատկության վայրէափից դուրս դիմացկան և յաջող օքին և նոր բարքարություն հաղերում:



ՑԱՆԿ

	<i>Եջ</i>
1. Խոտացանության նշանակությունը	3
2. Առվույտ.	6
3. Վիկ.	16
4. Կորնգան	23
5. Սուլանի խոտ:	27



ԳԻՒՆ ԵՎ ՏԱՐԾ.

94

18. 992

ԹԵՇՐԻՎ ՏՄԱՐԱՆ
ԹԱՏՎԵՐ 1535
ԳՐԱՌԵՎԿԱՐ 6228 (Բ)
ՏԻՐԱԺ 4000